Հավելված 2
Պարեկային ծառայության գործառույթները

1. Հասարակական կարգի և հասարակական անվտանգության ապահովումը,
2. հանցագործությունների և վարչական իրավախախտումների նախականխումն ու կանխումը,
3. հանցագործությունների և վարչական իրավախախտումների հայտնաբերումը, դրանց խափանումը,
4. հանցագործությունների և վարչական իրավախախտումների ծնող պատճառներն ու դրանց նպաստող պայմանների պարզումը, դրանք վերացնելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը,
5. հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման կամ բացահայտման նպատակով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքին համապատասխան օպերատիվ հարցումների կատարումը կամ օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը,
6. հանցագործությունների և այլ իրավախախտումների հետևանքով անձանց կյանքի և առողջության նկատմամբ վտանգ հանդիսացող գործոնների չեզոքացումը և վերացումը,
7. հանցագործությունների մասին հաղորդումների ընդունումը, իրավախախտումների ու պատահարների մասին հաղորդումներին ու ահազանգերին օպերատիվ արձագանքումը,
8. իրավախախտում կատարած անձանց արգելանքի վերցնելը, նրանց հետաքննության մարմնի կամ նախաքննություն իրականացնող մարմնի վարչական շենք տեղափոխումը, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում անձին ձերբակալումը և դրան ուղեկցող անձնական խուզարկություն կատարումը,
9. հետախուզման մեջ գտնվող և անհետ կորած անձանց, ինչպես նաև հետախուզվող տրանսպորտային միջոցների հայտնաբերումը,
10. դեպքի վայրի պահպանությունը,
11. ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության ապահովումը,
12. քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, նյութեր և իրեր, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք, առարկաներ, հանցագործության գործիքներ և հանցագործության հետքեր կրող այլ առարկաներ տեղափոխելու մասին տեղեկություններ կամ հիմնավոր կասկածներ առկա լինելու դեպքերում՝ վարորդների կամ քաղաքացիների ներկայությամբ տրանսպորտային միջոցների, ինչպես նաև փոխադրվող բեռի զննությունը,
13. իր ենթակայությանը վերապահված վարչական իրավախախտումների դեպքերի արձանագրումը և հաշվառումը,
14. իր ենթակայությանը վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթի իրականացումը,
15. քննչական և դատավարական գործողությունների կատարման ընթացքում վարույթն իրականացնող մարմիններին աջակցությունը, դրանց կատարմանը խոչընդոտող հանգամանքների վերացումը,
16. բնակչությանն անհետաձգելի օգնություն ցուցաբերող ծառայություններին աջակցելը,
17. տուժած անձանց անհետաձգելի բժշկական օգնության և հոգեբանական աջակցության ցուցաբերումը,
18. իրավախախտումների դեմ պայքարի ոլորտում ոստիկանության ստորաբաժանումների և շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցությունը,
19. օրենքով սահմանված այլ գործառույթներ։